ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱԶԵՏԱԿՑՈՒԹԻՒՆ

# ԱՐՇԱԼՈՅՍ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԹԱԲԱԹԵՐԹ

ԳԻՆԸ ՏԱՐԵԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

Առաջին երեսում տողը (petite) 6 շահի
Վերջին ,, ,, ,, 3 շահի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ Է

Թաւրիզում ամիսը 1,50
Գաւառներում ,, 2 ղր.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՐԺԷ
8 ՇԱՀԻ

Հասցէն՝ Redaction „Archalousse" Tauris (Perse) | ادارهٔ روزنامهٔ «آرشالوس» تبریز

Խմբագրութեան հետ գործ ունեցողները դիմեն «Գաղթականական Բիւրո» Հայկ Իսախանեանին

Բ. ՏԱՐԻ — № 16 ՀԻՆԳՇԱԲԹԻ 27 (10) ՅՈՒՆԻՍ 1919 Թ. — Բ. ՏԱՐԻ

## ԱԶԴ

*Ուղարկելով անպորբագրերը, խնդրում ենք մեր յարգելի բաժանորդներից իրենց բաժանորդագները յանձնել ցրիչին կամ ինձ։*

„Արշալոյս"ի Ֆինանսական Յանձնախմբի կողմից
Աշոտ Մ. Բաղդասարեան.

## ՀՅ. ԳԵՂԱԿՈՒԹԻՒՆԻ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԻ ՇՐՋԱՆԵՑԻՆ ԺՈՂՈՎԸ

II

Անցեալ անգամ մենք ուրուագծեցինք մեր երկրի քաղաքական և տնտեսական կացութիւնը, որ տապնապակի և աղէտաբեր բաներով որակեցինք և թէ այդ պայմաններում գործող մեր իրականութեան միակ մեծ և ուրոյն կազմակերպուած կուսակցութիւնը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնն ինչպիսի քաղաքականութեան էր հետամուտ։ Եւ եթէ մի բոպէ ի նկատի առնելու լինենք սոցիալիստական կուսակցութեան—ընդհանրապէս—արժէքը, ապա պարզ պիտի լինի, թէ վերոյիշեալ քաղաքական ուրոյն պայմաններում ինչ դեր պիտի խաղար և ինչ դիրք պիտի բռնէր, դէպի հարեան ժողովուրդների դեմոկրատիան՝ մի սոցիալիստական կուսակցութիւն։

Հ. Յ. Դաշնակցութեան տակտիկան և քաղաքականութիւնն ըստ ամենայնի համապատասխանում է սոցիալիստական կուսակցութեան կոչմանը։

Դաշնակցութեան գործելակերպն ու արժէքը մեր աչքում դեռ աղանցօրէն կը բարձրանայ, երբ գէթ մի բոպէ մենք կը վերյիշենք մեր հարեան ազգութիւնների կուսակցութիւնների դաւաճանական և ներազգային գործունէութիւնն ու բռնած դիրքը թէ ընդհանուր աղէտի ժամանակ և թէ հէնց այժմ։

Մենք խօսում ենք մասնաւորապէս վերջին երկու տարիների մասին և գալիս ենք մի անգամ ևս արձանագրելու, որ Դաշնակցութեան դերն անգնահատելի է. իւրաքանչիւր ոչ կրքոտ և սառն ու անաչառ դատող անհատ ներախտիրի խորը զգացում ունի իր սրտում։

Միշտ նախաձեռնողի ու գեկավարի դերում, կազմակերպչական արտակարգ հանդի և տաղանդի մարմնացում. միշտ սիրտի դող և գուրգուրող աշխատաւորութեան և նրա շահերի, միենոյն ժամանակ տեղ պաշտպան և մարտնչող. համերաշխութեան և հանդուրժակցութեան նախաձեռնող։ Ամեն տեղ աշխատաւորութեան հետ և աշխատաւորութեան համար։

Ըստ անգամ անհաղորդ իր միւս հատուածներին, Դաշնակցութիւնն ամենուրեք՝ վարել է անշեղ, հետեող և համառման քաղաքականութիւն։

Մեր կուսակցութեան Լուծեան յատկանիշները մի առ մի թուելուց յետոյ, չենք կարող չարձանագրել մի ուրիշ՝ աւելի յատկանշական փաստ, որ Հ. Յ. Դաշնակցութիւնն եղել է գերազանցէն գործի կուսակցութիւն։ Նրա համար տեսականը, կարելի է ասել, գոյութիւն չի ունեցել՝ առանց գործնականի։

Զ-րդ շրջանային ժողովը լսեց մեր շրջանի բոլոր մարմինների գործունէութեան տեղեկագրերը, գործի պատմութիւնը, գնահատեց ըստ արժանւոյն և ապա անցաւ իր առաջադրած խնդիրների պարզաբանութեան և բազմակողմանի քննութեան — միշտ աչքի առաջ ունենալով ընդհանուր աշխատաւորութեան կենսական շահերը—դուրս բերելով իր եզրակացութիւնները—կեանքի մէջ կիրառելու և իրականացնելու համար։ Յաջորդ անգամ մենք կանդրադառնանք Շրջ. ժողովի եզրակացութիւնների շուրջը և մի առ մի քննութեան կառնենք համառօտակի այն կէտերը, որոնք մեր կուսակցութեան ապագայ գործունէութեան ուղին են մատնանշում,

(Շարունակելի)

Berta

## ՄԵԼ ՍՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ

I

Մեր աշակերտութիւնը, մասնաւորապէս Թեմականի աշակերտութիւնն իրենից ինչ է ներկայացնում, եթէ ոչ մի սխալ ըմբռնողութեան ամբողջութիւն։

Գալով դպրոց մենք մտածում ենք, որ շատ աւելի-բան ենք անում, երբ պատրաստում ենք դասերը, երբ կարդանում ենք դասագրքում եղած ուսուցչին, գէթ մասամբ, բաւարարել պատրաստելով նրա դասը և յանդէն այդ հաշխատանքի աչքաթող ու անուշադիր թողնում այն բոլորը, որոնք հէնց միանալով դպրոցի տուածի հետ, մի ամբողջութիւն պիտի կազմեն։

Եթէ մի բոպէ ծայրահեղ զիջմամբ ընդունենք, որ լոկ դասերի պատրաստելը պայմանաւորում է աշակերտութեան. դարձեալ մխիթարական բան չենք գտնի։ Այն կենդանի հետաքրքրութիւնը, որ սովորելու պահանջ, ծարաւ ունեցող աշակերտին պիտի կապի դասերի հետ, այդ ևս բացակայում է մեզ մոտ։ Ուսուցիչը դասը պատմելիս, մանաւանդ երբ դասագիրք չկայ, աշխատում ենք ըստ կարելոյն շատ գրել նրա պատմածից (երբեմն նոյնիսկ պահանջում ենք թելադրել), որպէսզի յաջորդ անգամ պատրաստելիս շատ ժամանակ չգործադրենք և «ուղեղներս լոգնեցնենք»։ Իսկ ձգտում այդ տուած գիտութիւններին աւելացնել աւելի ծանօթութիւններ և շատ աւելի տեղեկութիւններ, քաւ լիցի, եթէ երբ և իցէ կմտածենք. «Զէ որ ինքն՝ ուսուցիչն այդքան է պատմել»... Քաւարանից անցանք, մեղքներս քաւեց... Զենք մոռանում ի հարկէ և անգիր անելը, շատ անգամ ամբողջ նախադասութիւնները, նոյնիսկ պարբերութիւնները բրթում ենք իրար յետևից, առանց ասածներիս հաշիւը գիտակցելու։ Իսկ այդ այսօր կայ, վաղը չկայ, էջ որ յիշողութիւնը շարունակաբար նորանոր տեղեկութիւններով է ծանրաբեռնւում և շատ սակաւ ու ուժեղ յիշողութիւններ կարողանում են միւս օրուան հասցնել. բայց այդ էլ շատով անցնում է, որովհետև գիտակցութիւնից անկախ է լինում։

Երբեմն և շատ յաճախ, դիմում ենք աւելի «խելացի» միջոցի. նամանաւանդ երբ դասը քիչ է լինում, այն է դասամիջոցին մի կամ մի քանի անգամ կարդում, եթէ մեզ է վիճակւում մի կերպ պատասխանում և շատ չանցած մոռանում. ինչու, եթէ հարցնէք, ձեզ կը պատասխանեն «որովհետև առարկան հետաքրքիր չէ, ուսուցիչը չի կարողանում դասը հետաքրքիր դարձնել» կամ «այս ինչ առարկան մեզ ինչ պէտք պիտի գայ կեանքում, անմիջական չի...» և հազար ու մի բաներ... Եւ այսպէս սովորելով, մեր «աշակերտական» պարտականութիւնը «կատարելով» գնում ենք և հանգիստ խղճով ժամանակը մեռցնում շատ անմիտ կերպով։

Այդ բոլորից յետոյ, այսօր 3-րդ, 4-րդ, 5-րդ դասարանում, վաղը 6-րդում և ապա... կաւարտենք և այն էլ միջնակարգ դպրոցը կիստացած տեղեկութիւններով, իսկ դրա հետ միասին այն խոշոր գիտակցութիւնը, որ միջնակարգ դպրոց ենք աւարտել, վկայագիր ստացել...

Բնական է, այսպիսի մտաւոր պաշարով կեանք գուրս գալով, մենք ոչնչի ընդունակ չենք կարող լինել, ոչնչով չենք զանազանւի մեր «ագէտ», «անկիրթ» միջավայրից և մի երկու օրից յետոյ թողած ամեն ինչ, նոյնիսկ աշխատելով մոռանալ ինչ որ չարաբաստիկ

լիզողությունը դժբախտություն է ունեցել պահելու և մի բերան աջ ու ձախ կը յայտարարենք. «գրպրոցը մեզ ոչինչ չի տալիս, ուսուցիչներն անպատրաստ են...և այլն։ Ոչ, ընկերներ. սխալում ենք. դպրոցն աշխատում է շատ բան տալ, մենք չենք ընդունում, մենք ենք խուսափում բան սովորելուց, եթե ոչ, հակառակ պարագային, մենք կաշխատենք ամեն միջոցով, թէկուզ աշխատանքի maximum-ով (ամենաշատ) ձեռք բերել այն, ինչ որ դպրոցը չի տալիս մեզ (բացառություններ իհարկէ միշտ կան)։

Փորձում ենք երբեմն դպրոցի դասերի պատրաստությունից դուրս մնացած՝ կատարեալ լարմարություններով ժամանակն օգտագործել ընթերցանությամբ—որի բազմակողմանի արդիւնքներն անկարելի է ուրանալ—շատ սակաւ և երբեմն էլ երբէք։ Եւ պիտի դուրս գանք կեանքի մէջ իբրև «կրթուած» անհատներ ծառայելու միջավայրին, ժողովրդին, առանց նրա ցաւերի ամենատարրական ծանօթության, առանց նրա պէտքերը գէթ մասամբ ճանաչելու, վերջապէս առանց, նոյնիսկ, այն գիտական և փորձնական դարմաններին ծանօթ լինելու՝ որանք անհրաժեշտ են լանուն ժողովրդի ասպարէզ եկողին. դա դեռ, ի հարկէ, եթէ կմտածենք ուրիշի համար մի բան անելու, իսկ եթէ միայն մեր անհատականությամբ մտահոգուած լինենք—դարձեալ չենք արդարանալ, որովհետև կարգին ծանօթություն չունենալով մայրենի գրականության համեմատաբար այս կամ այն խոշոր գրողի, նրա գրուածքների, գրական ուղղության (շկոլա) և վերջապէս նրա դաւանանքների մասին, օգտուում ենք ոմեր լսողությունից սեպհականացնելով այսինչից կամ այնինչից մի քանի գովելի կամ պախարակելի նախադասություններ և հարկ եղած դէպքում չենք զլանում մեր «հեղինակաւոր կարծիքնե» արտայայտելու այս կամ այն հարցի մասին։ Այս դեռ մեր մայրենի լեզուի մասին, իսկ օտար գրականության հետ ինչքան ծանօթ ենք, այդ էլ կտեսնենք յաջորդ անգամ։

(Եարունակելի)

Հ. Զաւէն

## ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ոչ մի ժամանակ այնքան ցայտուն և գեղեցիկ կերպով երևան չի եկել, այն գիտակցությունը պատանեկության մէջ, ինչ որ ներկայումս։

Տարիներ շարունակ մեր պատանեկությունը, որ միանգամայն զուրկ է եղել ինքնաճանաչությունից ու միշտ անտարբեր դէպի իր շրջապատն, այսօր արդէն այդ նոյն պատանեկությունը գիտակցել է իր պարտականությունները, զգացել է իւր վրայ դրուած յոյսերը և հանդէս է եկել իր համեստ գործունէությամբ որոշ չափով օգտակար լինելու իւր շրջապատին։

Մեր անմխիթար ու քարացնող միջավայրում, որից ոչինչ սկընկալել չի կարելի, ուր չկայ ոչինչ գրաւիչ և գեղեցիկ, կեանքը որոշ չափով տանելի է լինում, երբ առաջ եայ ուտել ու քնելուց յետոյ վերջապէս զգում ես մի փոքր շարժում, լինի դա պատանեկական կամ հասարակական, և այսօր արդէն այդ շարժումն աւելի լայն ծաւալ է ստանում շնորհիւ պատանեկական միության։ Պատանեկական Միությունն է, որ այսօր հանդիսացել է որպէս առաջնորդ պատանեկության և նրա հետ ձեռք ձեռքի տուած իրենց համեստ գործունէությամբ ու անվհատ եռանդով աշխատում են օգտակար լինել մեր միջավայրին։

Նա արդէն գիտէ և ճանաչում է իւր դերը մեր կեանքում, նա զգացել է իւր պարտականությունների սահմանը. գիտակցել է, որ ինքը պէտք է հանդիսանայ ապագայ քաղաքացիությունը և նրա ձեռքը պէտք է անցնի մեր կեանքի ղեկը, որովհետև հասարակությունն է, որ պէտք է ձև տայ կեանքին, նա է որից կախումն ունի մեր կեանքի բարձր ու ցածր լինելը։ Եւ որքան գիտակից ու ազնիւ լինի մի տեղի հասարակությունն, այնքան աւելի գեղագեղի և բարձր կը լինի այնտեղի կեանքը։ Եւ ահա Պատանեկական Միությունը գիտակցել է այդ բոլորը և ոչ մի ջանք չի խնայում պատրաստել հենց այժմյանից հասարակության համար առողջ, գիտակից և ազնիւ անդամներ, և այդ յաջողում է նրան որոշ չափով, շնորհիւ իւր յամառ և անձնուէր գործունէության։

Ամբողջ տարի ու կէսուայ գործունէությամբ Պատ. Միությունն իւր ուժերը ներածին չափ գործել է պատանեկական կեանքում, և օգտակար է եղել պատանեկության, նա արել է այն, ինչ որ կար նրա հնարաւորության սահմաններում, այդ տեսակէտից արդէն, անժխտելի ու անուրանալի է Պատանեկական Միության դերը։

Նա գիտէ և ճանաչում է իւր պարտականությունները, նա է որ պէտք է հանդիսանայ մեր կուսակցության աւելի թարմ ու նոր ճիւղերը և նա աւելի մեծ դեր ունի կատարելու ապագայում, նա է որ պէտք է պատրաստի բարի, ազնիւ և անձնուէր կուսակցականներ և հէնց այդ է, որ հանդիսանում է նրա գործունէության միջոցը։

Անուշ

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Ներկայ յոդուածաշարքով մեր նպատակն է տալ ընթերցողներին մատչելի մեկնաբանությամբ. Դաշնակցությունը—իբրև յեղափոխական և սոցիալիստական կազմակերպություն—պահանջները, կանգ առնելով ի հարկէ ծրագրի ամենաէական կէտերի վրայ միայն։

### I.

Սկսենք այս հարցից։

— Ինչո՞ւ համար այսօր աշխարհում այնքան քաղցած, ճնշուած, տառապող, իրաւազուրկ և այնքա՜ն դժբախտ մարդիկ կան։ Ինչո՞ւ համար միլիոնաւոր մարդիկ քաշ են տալիս իրենց գոյությունը թշուառության մէջ, կոչտացած տգիտության ճանկերում, կռացած աշխատանքի բեռի տակ, ամեն տեսակ բռնության ենթակայ, զուրկ սեպհական կեանքից... այն ժամանակ, երբ մարդկանց մի փոքրիկ խմբակ խեղդուում է պերճանքների և շքեղության մէջ, օգտուում լիաստատ կերպով գիտության և արուեստի բարիքներից, վարում կիսադատարկ և շատ անզամ բոլորովին անզործ մի կեանք, կրում իր ձեռքում իշխանությունը և վայելում կամքի ազատությունը... ինչո՞ւ։

Այս հարցերի պատասխանը պէտք է որոնել մեր ամբողջ կեանքի կազմի մէջ։ Չի կարելի ասել, որ մեր երկիրը աղքատ լինէր հողով և բնության այլ բերքերով. բայց այդ բոլոր հարստությունը կենտրոնացած են սակաւաթիւ մարդկանց ձեռքում և կազմում են նրանց մասնաւոր սեպհականությունը։ Այսպէս հողը, գործարանները, դրամը, խօսքով ժողովրդի տնտեսական կեանքի միջոցներն ու գործիքներ կենտրոնացած են մի քանի բախտաւորների՝ հարուստների ձեռքում, որով ժամանակակից մարդկության ստուար մեծամասնությունը ծառայում է կապիտալիստին. կարիքը հարկադրում է նրանց ծախել իրենց բանուորական ուժը։

Ահա մի պատճառն այն անարդարության, որի վրայ հիմնուած է ներկայ իրաւակարգը, այն է մասնաւոր սեպհականության և ուրիշի աշխատանքի շահագործման սկզբունքը։ Այսպիսով շնորհիւ այդ կարգերի, ներկայ մարդկությունը բաժանուում է երկու բանակների՝ աղքատ մեծամասնության և վայելող փոքրամասնության, որոնք անընդհատ պայքարի մէջ են իրար հետ։

Արդէն անհերքելի ճշմարտություն է դարձել ուժը իրաւունք է առածը, արդար է, թէ ոչ, միայն այդպէս է։ Ներկայ կապիտալիստական կարգերում ո՞վ է օրէնքներ մշակում, հարկեր սահմանում, կառավարում, մի խօսքով ո՞ւմ ձեռքն է քաղաքական իշխանությունը. դարձեալ նոյն արտօնեալների փոքրաթիւ խմբակի. իսկ նրանք, որոնք իրենց ուսերի վրայ են կրում ամբողջ պետության ծանրությունը միայն ստրուկներ են, ոչխարի մի հօտ, որը մեծ բարիք է համարում, եթէ իր տեսակն [illegible] բողջ պետության ծանրությունը միայն ստրուկներ են, ոչխարի մի հօտ, որը մեծ բարիք է համարում, եթէ իր տեսակն [illegible] առանց միմեանց ենթարկելու. և հաւասար իրաւունքներով։ Այդ երջանիկ օրերում աշխատաւորությունը [illegible] չի լինի մեծ թարկիշխանությունների [illegible] տության հետ [illegible] քական ազա- [illegible] [illegible] կայ և պարապմունք կամ հնարաւորություն տալու դիտությունների և արուեստներին, այսինքն զարգացնել միտքը և ազնուացնել հոգին։ Աշխատաւոր դասակարգերը դրանից ևս զուրկ են շնորհիւ անընդհատ աշխատանքի, որ կարողանան գոնէ ցամաք հաց գտնելու։ Ուրեմն անհաւասարություն տնտեսական, քաղաքական և կուլտուրական։ Այդ անարդարությունը վերացնելու համար միայն մի ելք կայ, այն է՝ նոր հիմքերի վրայ դնել ժողովրդների տնտեսական, ատիսատուորական կեանքը. կամ սոցիալիզմի միջոցով դէպի աշխատաւորական պետություն։ Անունն արդէն ցոյց է տալիս, որ այդտեղ բոլորն էլ պիտի աշխատեն, ոչ ակամայ, հարկադրուած, այլ ազատ, դրաւիչ աշխատանքով։ Կը վերանայ մասնաւոր սեպհականության գաղափարը, բոլոր գործիքները և գործարանները կը դառնան ընդհանուրի սեպհականություն, որով կը ջախջախուեն և տնտեսական զերության բոլոր ձևերը։ Աշխատաւորական պետության մէջ կը ոչնչանայ դասային խտրությունը, բոլորը կը լինեն հաւասար, [illegible] այստեղ [illegible] ապայայ ուժը միայն հարստության մէջ չէ այլ կայ և գիտությունը, որը հարուստները իրենց ձեռքը գործիք դարձնելով, մեծամասնությունն կարողանում են պահել խաւարի մէջ։ Աշխատաւորական պետության մէջ շնորհիւ ուսման ձրի և պարտադիր լինելուն գիտությունից օգտուի և մեծամասնությունն՝ աշխատաւորությունը, որով գիտությունը կը դադարի արտօնեալների ձեռքում զէնք լինելուց և կը ծառայի իր իսկական նպատակին։

Երբ բովանդակ աշխատաւոր ժողովուրդը՝ գիւղացիները, բանւորները, մտաւոր աշխատանքի մարդիկ ու միւս չունեորները կը մերնեն իրենց թշուառ վիճակի պատճառը և իրենց ամբողջ ուժով կը կռուանան կապիտալիստական կարգերի դէմ, այն ժամանակ արդէն վերջինս չի կարող դիմանալ բուռն գրոհին և ընտրված կլինի տեղի տալ «աշխատաւորական պետության», այն լաւագոյն ապագային, որին ձգտում են բոլոր երկրների սոցիալիստական կուսակցությունները ընդհանրապէս, իսկ մասնաւորապէս մեր կեանքում Հ. Յ. Դաշնակցությունը։

Հայկ

Խմբագրական մարմին